ՀԱՄԱՋԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

—o—

Թիֆլիսի թեմական առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը մի հրաւէր է ուղղել իր թեմի հայ ժողովրդին, որի էական մասը ամփոփուած է հեռաւոր տողերի մէջ.

Գրերի գիւտի ժամանակակից Կորիւն վարդապետի պատմելով, ս. Սահակի և ս. Մեսրոպի ջանքերով ամենակարճ ժամանակում երկիրը ծածկուեց դպրոցների ցանցով և կէս դար անց ստեղծուեց հայ գրականութեան և կուլտուրայի ոսկեդարը։

«Այնմ ժամանակի երանելի եւ ցանկալի աշխարհս հայոց պ՚ղպայման սքանչելի լինիր, յորում անկարծ... ի

ձնեն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառ հայերենախօսք զտան»։

Այդ պատմական մեծ փաստը տեղի ունեցաւ Փրկչական 412 թ. առաջ. մենք ապրում ենք քսաներորդ դարում, և սակայն այսօր հայ ժողովուրդը իր մեծամասնութեամբ դպրոց չունի, տգէտ է, յետամնաց և ուսման ծարաւի։

Այս հրաւէրը ուղղելով թեմիս հայ ժողովրդին յիշեցնում ենք նրան, որ Մեծ Ծոնի առթիւ մեր առաջ է դրուած մեր դպրոցի պահպանութեան և ապահովութեան մեծ խնդիրը. հրաւիրում ենք ամեն մի հայի, որը տասն և հինգ դար գրերի գիւտի բարիքները վայելող ժողովրդի զաւակն է, խղճմտօրէն գիտակցի տօնի և նրա հետ կապուած մեծ ֆոնդի կարևորութիւնը և օգնութեան ձեռք կարկառի հայ կարօտ դպրոցին։

Ժամանակին դիմումն է եղած, տօնի օրերն են հասել և մենք յիշեցնում ենք հայ հասարակութեան, թող ամեն ոք իր կարողացածին և ցանկացածին չափ փութայ իր նէրը տալու։ Քաղաքումս հաստատութիւնների և դասակարգերի ներկայացուցիչների միջոցով պիտի կատարւի հանգանակութիւն, իրենց ձեռին ունենալով տպագրած, պաշտօնական կնքով վաւերացրած ստորագրութեան թերթեր։

Նէրներ կընդունին և կարձանագրին նաև առաջնորդարանում ամեն ժամանակ։

Ամեն օր լրագրերում կը տպագրւին հանգանակած գումարների ցուցակները»։

Այս առթիւ պարտք ենք համարում յիշեցնել հայ հասարակութեանը, որ վերոյիշեալ հանգանակութեան համար թոյլտուութիւն է ստացած Կովկասի Փոխարքայից և ներքին գործերի մինիստրից։